Հոկտեմբերի 1, 2018

# «ՔՈՆԹՈՒՐԳԼՈԲԱԼ» ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

## ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ..... 5
II. ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ..... 5
III. ՀԱՐԱԿԻՑ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ ..... 5
IV. ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՎԱԼԸ ..... 6
V. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ..... 6
VI. ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ..... 7
A. Արգելված գործողություններ ..... 8
i. Կաշառք տալը ..... 8
ii. Քաղաքական հանգանակություններ ..... 8
iii. Երրորդ կողմի անպատշաճ վճարումները ..... 8
B. Վճարումներ, որոնց կատարման համար անհրաժեշտ է Համապատասխանության ապահովման բաժնի հաստատումը ..... 9
i. Սոցիալական պատասխանատվության ծրագրեր, բարեգործական նվիրատվություններ և համայնքային հանգանակություններ ..... 9
ii. Պետական պաշտոնյային մատուցվող նվերներ և հյուրանկալություն ..... 9
VII. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄ ..... 10
VIII. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ ..... 10
IX. ՊԱՏԺԻ ՏԵՍԱԿՆԵՐ ..... 11
X. ՀԱՐՑԵՐ ..... 12

<table>
<tr><td colspan="4">Փաստաթղթի սեփականատեր. Համապատասխանության ապահովման գծով գլխավոր մասնագետ<br>Հաստատող. Համապատասխանության ապահովման գծով գլխավոր մասնագետ<br>Կարգավիճակ. ☐ Նախագիծ ☐ Վերանայվող ☒ Հաստատված ☐ Հնացած</td></tr>
<tr><td>Ամսաթիվ</td><td>Տարբերակ</td><td>Նկարագիր</td><td>Ում կողմից է թարմացվել</td></tr>
<tr><td>Հոկտեմբերի 1, 2018</td><td>2.0</td><td>Հաստատված տարբերակ</td><td>Համապատասխանության ապահովման բաժին</td></tr>
</table>

# ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԹԵՐԹԻԿ

| **Թողարկման No.** | **Ամսաթիվ** | **Անվանում** | **Վերանայման նկարագիր** |
|---|---|---|---|
| Վեր. 1 | 2014 | Համապատասխանության ապահովման բաժին | Քաղաքականության ստեղծում |
| Վեր. 1.5 | 2015թ հունիս | Համապատասխանության ապահովման բաժին | Ընտրված հատվածների խմբագրում |
| Վեր. 2 | Հոկտեմբերի 1, 2018 | Համապատասխանության ապահովման բաժին | Ամբողջական վերանայում |

## I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«ՔոնթուրԳլոբալ» ԲԲԸ-ն, նրա դուստր ձեռնարկությունները և բոլոր «ՔոնթուրԳլոբալ» ԲԲԸ-ին պատկանող կամ «ՔոնթուրԳլոբալ» ԲԲԸ-ի կողմից կառավարվող ֆիզիկական և իրավաբանական անձինք (այսուհետ փաստաթղթում անվանվում է՝ «**ՔոնթուրԳլոբալ**») ձեռնամուխ են եղել պահպանել էթիկական և օրինական բարձր ստանդարտներ: Դա նշանակում է մեր բաժնետերերի, աշխատակիցների, հաճախորդների, մատակարարների, ծառայություն մատուցողների, կառավարության և հասարակության անդամների նկատմամբ մեր ամենօրյա աշխատանքների իրականացում ազնիվ և էթիկայի կանոններին համապատասխան:

## II. ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Սույն Հակակոռուպցիոն քաղաքականության (այսուհետ՝ «**Քաղաքականություն»**) նպատակն է օգնել «ՔոնթուրԳլոբալ» ընկերությանը ապահովել աշխարհում գոյություն ունեցող հակակոռուպցիոն օրենքների պահանջների բավարարումը, ներառյալ, բայց չսահմանափակվելով «Արտաքին տնտեսական հարաբերություններում կոռուպցիոն դրսևորումների դեմ պայքարի» մասին ԱՄՆ օրենքով («**FCPA»**), Միացյալ Թագավորության «Կաշառակերության դեմ պայքարի» մասին օրենքով («**Կաշառակերության մասին օրենքը**»), Բրազիլիայի «Ընկերության անթերի հեղինակության» մասին օրենքով («**BCCA**»):

## III. ՀԱՐԱԿԻՑ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ

- Վարվելագծի կանոնակարգ և բիզնես էթիկա,
- Հակակոռուպցիոն համապատասխանության ուղեցույց,
- Մատակարարների և երրորդ կողմ հանդիսացող ծառայություն մատուցողների ներգրավման քաղաքականություն,
- Նվերներին և հյուրընկալությանը վերաբերող քաղաքականություն,
- Ծախսերի հատուցման քաղաքականություն,
- Մատակարարի վարվելագծի կանոնակարգ,
- Գործարքների իրավական համապատասխանության ապահովման արձանագրությունը,
- Երրորդ կողմի համապատասխանության հաստատում և հարցաթերթ:

## IV. ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՎԱԼԸ

Սույն քաղաքականությունը ներառում է «ՔոնթուրԳլոբալ» ԲԲԸ, նրա բոլոր մասնաճյուղերը (այսինքն՝ «ՔոնթուրԳլոբալ» ԲԲԸ կողմից վերահսկվող կամ նրա ընդհանուր վերահսկողության տակ գտնվող ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձ) և աշխարհի տարբեր վայրերում գտնվող բոլոր մասնաճյուղերը (այսուհետ՝ «ՔոնթուրԳլոբալ»): «ՔոնթուրԳլոբալ»-ը մասնավորապես ներառում է.

- «ՔոնթուրԳլոբալ» ԲԲԸ-ն, նրա մասնաճյուղերը և նրա կողմից վերահսկվող կամ նրա ընդհանուր վերահսկողության տակ գտնվող ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձ, անկախ դրանց գտնվելու վայրից,
- «ՔոնթուրԳլոբալ» ընկերության տնօրեններին, պաշտոնյաներին և աշխատակիցներին,
- Համատեղ ձեռնարկություններ կամ այլ բիզնես ձեռնարկություն, որը վերահսկվում է «ՔոնթուրԳլոբալ» ընկերության կողմից, և
- «ՔոնթուրԳլոբալ» ընկերության կողմից ներգրավված երրորդ կողմերը:

Սույն քաղաքականությունը պետք է վերահսկի և գերակայի տեղական օրենքների կամ մաքսային նորմերի նկատմամբ, որոնք կարող են թույլատրել բիզնեսի վարման այնպիսի պրակտիկաներ, որոնք ավելի քիչ սահմանափակումներ են պարունակում, և նույնիսկ եթե այդ քաղաքականության կատարումը Ընկերությանը դնում է մրցակցային անբարենպաստ դիրքում:

## V. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

<u>*Ընտանիքի անդամ:*</u> Ծնող, ամուսին/կին, զուգընկեր, զավակ, քույր/եղբայր, հորեղբայր/մորեղբայր կամ հորաքույր/մորաքույր:

<u>*Պետական պաշտոնյա:*</u>

(i) Ցանկացած կառավարության կամ նրա որևէ դեպարտամենտի, գործակալության կամ նրա մասնաճյուղի պաշտոնյա կամ աշխատակից (այդ թվում, օրենսդիր, գործադիր, իրավական կամ վարչական մասնաճյուղերը, ներառյալ մարզային, տեղական, մունիցիպալ, պետական կամ դաշնային մարմինների անդամները),
(ii) Պետական սեփականություն հանդիսացող կամ վերջինիս կողմից իրականացվող բիզնես գործունեության մեջ ներգրավված ցանկացած պաշտոնյա կամ աշխատակից
(iii) Ցանկացած անձ, ով գործում է իր պաշտոնական դիրքի սահմաններում կամ պետական կամ կառավարական գործակալության անունից,

(iv) Ցանկացած միջազգային կամ պետական մասնակցությամբ կազմակերպության պաշտոնյա կամ աշխատակից (օրինակ, Համաշխարհային Բանկ, Եվրոպական Տնտեսական Միություն, Միջազգային Ֆինանսական Կորպորացիա և Արժույթի Միջազգային Հիմնադրամ), և

(v) Ցանկացած քաղաքական կուսակցության ղեկավար կամ աշխատակից, կուսակցության պաշտոնյա կամ քաղաքական պաշտոնի թեկնածու:

Բացի այդ, պետական պաշտոնյաները ներառում են ոչ միայն ընտրված պաշտոնյաներին, այլև պետական պաշտոններ զբաղեցնող խորհրդատուներին, կառավարությանը պատկանող ընկերությունների աշխատողներին և դիվանագիտական անձնագիր ունեցող ցանկացած անձի: Կառավարության պաշտոնյաները ներառում են ցանկացած անձի, որը պաշտոնապես գործում է կառավարության անունից, նույնիսկ եթե չի հանդիսանում պետական կառույցի աշխատող:

*Պատասխանատու աշխատակից:* «ՔոնթուրԳլոբալ» ընկերության աշխատակիցը, ով իրահանգավորում է երրորդ կողմի ներգրավումը կամ ուղղորդում է նրանց գործերի ներկայացումը Երրորդ կողմերի համապատասխանության ապահովման Տիրույթում և պատասխանատվություն է կրում երրորդ կողմի ներգրավման վերահսկողության և մշտադիտարկման համար: Ուշադրություն՝ յուրաքանչյուր երրորդ կողմի ներգրավում ենթադրում է առանձին Պատասխանատու անձի նշանակում:

## VI. ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Մեր գործունեությունը ենթարկվում է տարբեր երկրների, պետական և կառավարական գործակալությունների օրենքներին և նորմերին: Մենք ակնկալում ենք, որ Ընկերության բոլոր աշխատակիցները հետամուտ կլինեն բավարարելու գործող օրենքների, կանոնների և նորմերի պահանջները:

*Սա նշանակում է, որ ոչ մեր Ընկերությունը, ոչ մեր աշխատանքներում ներգրավված երրորդ կողմը իրավասու չեն խոստանալ, առաջարկել, վճարել կամ լիազորել գումարի վճարումը կամ որևէ այլ արժեքավոր իրի փոխանցումը ուղղակի կամ անուղղակի կերպով որևէ պետական պաշտոնյայի կամ պետական պաշտոնյայի ընտանիքի անդամին, որևէ պաշտոնատար անձի վրա անպատշաճ կերպով ազդելու նպատակով:*

## A. Արգելված գործողություններ

Արգելված են համարվում հետևյալ գործողությունները.

i. *Կաշառք տալը*

Գումարների կամ որևէ արժեքավոր իրի տալը, խոստումը տալ կամ լիազորումը տալ որևէ պետական պաշտոնյայի, պետական պաշտոնյայի ընտանիքի անդամին կամ մասնավոր անձի «ՔոնթուրԳլոբալի» անունից, նպատակ ունենալով ձեռք բերել կամ պահպանել բիզնեսը կամ ապահովել անպատշաճ առավելություն, կամ անպատշաճ կերպով ազդելու նրանց վրա: Կարևոր չէ, արդյոք այդ ընծան կամ գումարը կարող է կոչվել «կաշառք»: Գոյություն չունի նվազագույն գումարի սահմանաչափ կամ ընծայի արժեքի շեմ, որը գերազանցելու պարագայում այն համարվում է անօրինական, եթե դրա հիմքում եղել է որևէ անձ ներկայացնող կամ նրա համար աշխատանք կատարող անձի կամ մարմնի վրա անպատշաճ ազդեցության միտումը: «Կոմիսիոն պարգևավճարները», «պարգևները» և «գումարի նվիրատվությունը» արգելված է, եթե դրանք առաջարկվում կամ տրվում են ուղղակի կամ անուղղակի կերպով, փորձ կատարելով անպատշաճ կերպով ազդել որևէ մեկի որոշումների կայացման վրա հօգուտ «ՔոնթուրԳլոբալի»:

ii. *Քաղաքական հանգանակություններ*

«ՔոնթուրԳլոբալ» ընկերության անունից քաղաքական կուսակցություններին կամ պաշտոնյաներին հանգանակությունների կատարում: Հանգանակությունները ներառում են դրամական միջոցներ, աշխատակիցների աշխատաժամանակը և «ՔոնթուրԳլոբալ» ընկերության ռեսուրսները կամ գույքը: Մինչդեռ աշխատակիցները կարող են իրենց անունից ու կողմից կատարել հանգանակություններ, սակայն նրանք պետք է ապահովեն, որպեսզի նման հանգանակությունները որևէ կերպ չվերագրվեն կամ չկապվեն «ՔոնթուրԳլոբալ» ընկերության հետ:

iii. *Երրորդ կողմի անպատշաճ վճարումները*

Գումարի տրամադրում կամ առաջարկ տրամադրել գումար, ընծա կամ այլ արժեքավոր իր երրորդ կողմին, երբ գոյություն ունի ողջամիտ հավանականություն, որ դրանք կառաջարկվեն պետական պաշտոնյային, պետական պաշտոնյայի ընտանիքի անդամին կամ մասնավոր անձին արգելված նպատակներով:

**B. Վճարումներ, որոնց կատարման համար անհրաժեշտ է Համապատասխանության ապահովման բաժնի հաստատումը**

i. *Սոցիալական պատասխանատվության ծրագրեր, բարեգործական նվիրատվություններ և համայնքային հանգանակություններ*

Սոցիալական ներդրումները և սոցիալական պատասխանատվության գործողությունները կառավարվում և կազմակերպվում են «ՔոնթուրԳլոբալ» ընկերության Սոցիալական պատասխանատվության և Բնապահպանական կայունության ապահովման հանձնաժողովի («SRESC») կողմից:

Աշխատակիցները, մինչ «ՔոնթուրԳլոբալ» ընկերության անունից սոցիալական պատասխանատվության գործունեություն ծավալելը կամ բարեգործական նվիրատվություններ կատարելը պարտավոր են ստանալ SRESC նախնական հաստատումը: Բացի այդ, տեղերում գործող ղեկավարությունը կամ տեղական Կայունության ապահովման հանձնաժողովները, որտեղ դրանք գոյություն ունեն, նույնպես պարտավոր են ստանալ նախնական հաստատում:

Հարկավոր է հաշվի առնել, որ Ընկերության անունից կատարված ցանկացած նվիրատվություն որևէ բարեգործական կազմակերպության, որը կապ ունի պետական պաշտոնյայի կամ մարմնի հետ, կամ եթե այդ նվիրատվության կատարումը առաջարկվել կամ պահանջվել է պետական պաշտոնյայի կողմից, պետք է նախապես հաստատվի Համապատասխանության ապահովման գծով գլխավոր մասնագետի կողմից:

Կանխիկով կատարված նվիրատվությունները համարվում է անընդունելի և ենթակա են Համապատասխանության ապահովման բաժնի նախնական հաստատմանը:

ii. *Պետական պաշտոնյային մատուցվող նվերներ և հյուրանկալություն*

Առաջարկված կամ ստացված նվերների կամ հյուրընկալության դեպքը պետք է համապատասխանի Նվերների և հյուրընկալության քաղաքականության պահանջներին:

Բացի այդ, պետական պաշտոնյային առաջարկվող բոլոր տեսակի նվերներն ու հյուրընկալությունը ենթակա է Համապատասխանության ապահովման բաժնի նախնական հաստատմանը Նվերների և հյուրընկալության Տիրույթի միջոցով, որը գտնվում է SharePoint-ում:

Նվերների կամ հյուրընկալության մատուցումը պետք է համապատասխանի տեղական օրենսդրությանը և պետք է ճշգրիտ և ամբողջական կերպով ձևակերպվի «ՔոնթուրԳլոբալ» ընկերության քաղաքականության համաձայն և պատշաճ կերպով հետևի ծախսերի փոխհատուցման ընթացակարգի պահանջներին: Կանխիկի տեսքով կամ նվերներին համարժեք կանխիկի տեսքով նվերների մատուցումը ընդհանրապես արգելված է:

## VII. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄ

Աշխատակիցներին արգելվում է «ՔոնթուրԳլոբալ» ընկերության հաշվապահական գրքերում և հաշվառումներում կատարել որևէ կեղծ կամ ապակողմնորոշող մուտքեր: Ակտիվների գծով գործարքները և տեղակայումները պետք է կատարվեն ղեկավարության կողմից տրամադրված լիազորությունների համաձայն, իսկ այդ բոլոր գործարքները պետք է գրանցվեն Ընկերության գրքերում, մուտքերում և հաշիվներում ճշգրիտ և ողջամիտ մանրամասնությունների արտացոլմամբ:

## VIII. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

- Ակնկալվում է, որ բոլոր աշխատակիցները կծանոթանան և կընկալեն սույն Քաղաքականությունը և կապակցված բոլոր քաղաքականությունները, մասնակցություն կցուցաբերեն Համապատասխանության բաժնի կողմից պահանջվող բոլոր դասընթացներում և կհամագործակցեն Համապատասխանության բաժնի հետ իրավական համապատասխանության ստուգման գործընթացում:

- Ընկերությունը նշանակել է Համապատասխանության ապահովման գծով գլխավոր մասնագետին, ով պարտավոր է վերահսկել սույն Քաղաքականության և Ընկերության Համապատասխանության ապահովման ծրագրի իրականացումը: Համապատասխանության ապահովման ծրագիրը կոչված է ապահովել համապատասխանությունը սույն Քաղաքականության, Հակակոռուպցիոն համապատասխանության ուղեցույցի և հարակից ընթացակարգերի և կանոնակարգերի հետ (տես սույն Քաղաքականության «Հարակից քաղաքականություններ և ընթացակարգեր» բաժինը): Համապատասխանության ապահովման գծով գլխավոր մասնագետը հանդիսանում է գործադիր ղեկավարության անդամ, ով անմիջապես զեկուցում է Գլխավոր գործադիր տնօրենին և Տնօրենների խորհրդի աուդիտային հանձնաժողովին:

- «ՔոնթուրԳլոբալ» ընկերության աշխատանքներում ներգրավված երրորդ կողմերը պարտավոր են գործել սույն քաղաքականության համաձայն և սատարել Ընկերության իրավական համապատասխանության ստուգմանը և նման ընթացքներին:

- Աշխատանքներում երրորդ կողմերի ներգրավումը պետք է իրականացվի համապատասխանության ապահովման, աղապտացման և հաստատման ընթացակարգերի պահպանմամբ, որոնք ամրագրված են «ՔոնթուրԳլոբալ» ընկերության «Երրորդ կողմ հանդիսացող մատակարարների ծառայություն մատուցողների ներգրավման» մասին քաղաքականության մեջ:

- «ՔոնթուրԳլոբալ» ընկերության աշխատակիցները պատասխանատու են երրորդ կողմերի մշտադիտարկման համար, որոնց առումով նրանք համարվում են Պատասխանատու աշխատակիցներ, ինչպես նաև պատասխանատու են Համապատասխանության բաժնի ուշադրությունը ցանկացած մտահոգության կամ կասկածելի գործողությունների վրա հրավիրելու համար:

- Եթե ձեզ մոտենում է որևէ մեկը, ով փնտրում է կաշառքի կամ այլ անպատշաճ վճարում ստանալու հնարավորություն, կամ փորձում է կազմակերպել նման կաշառք կամ վճար տալու հնարավորությունը, կամ եթե տեղեկանում եք սույն Քաղաքականության խախտման հավանականության մասին, ապա դուք պարտավոր եք անմիջապես զեկուցել դրա մասին Համապատասխանության ապահովման գծով գլխավոր մասնագետին:

## IX. ՊԱՏԺԻ ՏԵՍԱԿՆԵՐ

Ընկերությունը ակնկալում է սույն ընթացակարգերի խստիվ կատարումը: Համապատասխանության ապահովման գծով գլխավոր մասնագետը պարբերաբար անց է կացնելու սույն դրույթների պահանջների բավարարման ստուգումներ: Սույն Քաղաքականության պահանջների խախտման ցանկացած դեպք աշխատակցի, տնօրենի, պաշտոնյայի կամ երրորդ անձանց կողմից հանգեցնում է կարգապահական տույժի, ընդհուպ և նույնիսկ ներառյալ աշխատանքային կամ ծառայությունների մատուցման պայմանագրի խզումը:

Հակակոռուպցիոն օրենքների դրույթների խախտումը պատժվում է քրեա-իրավական տուգանքներով, ազատազրկմամբ կամ երկու միջոցի միաժամանակ կիրառմամբ անհատի դեպքում, իսկ Ընկերության դեպքում՝ տուգանքների և քաղաքացիական տուգանքների կիրառում:

## X. ՀԱՐՑԵՐ

Սույն Քաղաքականությանը կամ առանձին գործարքին վերաբերող հարցերը պետք է ներկայացվեն Համապատասխանության ապահովման բաժնին (compliance@contourglobal.com).

> ՄԻ ՓՈՐՁԻՐ ԼԵԳԻՏԻՄԱՑՆԵԼ ՄԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ, ՈՐԸ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱԿԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ ԿԱՍԿԱԾԵԼԻ Է: ԵԹԵ ՈՐԵՎԷ ԲԱՆ ՍԽԱԼ Է ԹՎՈՒՄ, ԱՊԱ ՀԱՎԱՆԱԲԱՐ ԱՅԴՊԵՍ ԷԼ ԿԱ:
>
> «Կասկածում ե՞ս, հարցրու և խորհրդակցիր»

## ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ես՝ ________________________________________________________, ContourGlobal-ի («Ընկերությունը») աշխատակից/պաշտոնյա/տնօրեն/ խորհրդատու/գործակալ/ծառայություն մատուցող, հաստատում եմ, որ ես ընթերցել և հասկանում եմ Ընկերության Հակակոռուպցիոն քաղաքականությունը:

Միևնույն ժամանակ, ես հաստատում եմ, որ համաձայնում եմ հետևել Քաղաքականությանը և ուսումնասիրել դրա պայմանները նախքան Ընկերության անունից կամ վերջինիս հետ կապված որևէ բիզնես գործունեության մեջ ներգրավվելը: Որևէ գործողություն ձեռնարկելուց առաջ ես դրա վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացնելու եմ Համապատասխանության գծով գլխավոր պաշտոնյային:

ՀԱՍՏԱՏՎԱԾ ԵՎ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ Է՝

________________________________
Ստորագրություն

Ամսաթիվ՝ ____________________